ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» մարտի 2012թ. **N ----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Ակադեմիկոս Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՅԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանը ծնվել է 17.03.1922թ. Ալեքսանդրապոլում՝ /այժմ Գյումրի/ իրավաբանի ընտանիքում։

1942 թվականին ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը։

1946 թվականին պաշտպանել է թեկնածուական, 1952 թվականին դոկտորական ատենախոսությունները և ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի, ապա դոկտորի գիտական աստիճաններ։

1953 թվականից պրոֆեսոր է, 1956 թվականին ընտրվել է Հայաստանի ԳԱ թղթակից անդամ, իսկ 1965 թվականին՝ ակադեմիկոս։

Ս. Համբարձումյանի գիտական հետազոտությունների հիմնական բնագավառը դեֆորմացվող պինդ մարմինների մեխանիկան է, որտեղ նա ստեղծել է մի շարք նոր ուղղություններ և դարձել մեխանիկայի հայկական դպրոցի հիմնադիրներից մեկը։

Ս. Համբարձումյանի մենագրություններն ու գիտական հոդվածները թարգմանաբար հրատարակվել են Անգլիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Չինաստանում և այլուր։

Նրա հիմնարար աշխատությունները դարձել են անփոխարինելի տեսական ուղեցույցներ նախագծային և կոնստրուկտորա-տեխնոլոգիական բազմաթիվ ինստիտուտների համար։

Համբարձումյանը գիտության մեծ կազմակերպիչ է, նրա նախաձեռնությամբ ստեղծվել են ՀՀ ԳԱ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱ Մաթեմատիկայի և Մեխանիկայի ինստիտուտները։

Նա եղել է ՀՀ ԳԱ ֆիզիկա-տեխնիկական գիտությունների և մեխանիկայի բաժանմունքի առաջին ակադեմիկոս քարտուղարը, Մեխանիկայի ինստիտուտի տնօրեն, 1974-1977թթ. ՀՀ ԳԱ առաջին փոխպրեզիդենտ, ավելի քան 30 տարի նա ՀՀ ԳԱ նախագահության անդամ է։

Ս. Համբարձումյանի կազմակերպչական ունակությունները, որպես գիտության և կրթության կազմակերպչի իրենց լիարժեք դրսևորումն ստացան հատկապես Երևանի պետական համալսարանի ռեկտոր աշխատած տարիներին։ Նրա ղեկավարության ավելի քան 14 տարիների ընթացքում բացվեցին փիլիսոփայության և սոցոլոգիայի, տնտեսական կիբեռնետիկայի և մեխանիկայի ֆակուլտետները, ստեղծվեցին չորս ճյուղային լաբորատորիաներ և «Լազերային տեխնիկա» գիտա-արատադրական միավորումը։

Ս.Համբարձումյանը հանդիսանում է Աստղագնացության Միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, Գիտության, Կրթության և Արվեստի Միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, Ռուսաստանի Դաշնության տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի անդամ, Սլովակիայի ԳԱ Մեխանիկների միության

պատվավոր անդամ, Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի պատվավոր անդամ, Բրատիսլավայի համալսարանի պատվավոր դոկտոր, ՀՀ ճարտարագիտական համալսարանի ակադեմիկոս և պատվավոր նախագահ։

Ս. Համբարձումյանը Խորհրդային տարիներին ընտրվել է ԽՍՀՄ Լենինյան և Պետական մրցանակների կոմիտեի անդամ, ՀԽՍՀ Պետական մրցանակների կոմիտեի փոխնախագահ, տեսական և կիրառական մեխանիկայի ՀԽՍՀ ազգային կոմիտեի նախագահության անդամ, ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ մի շարք գիտական խորհուրդների և կազմակերպությունների, կենտրոնական և հանրապետական գիտական ամսագրերի խմբագրական կոլեգիաների անդամ։

ԽՍՀՄ տարիներին Ս. Համբարձումյանը պարբերաբար ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի անդամ, ՀԿԿ Երևանի քաղաքային և շրջանային կոմիտեների, ՀԿԿ ԿԿ անդամ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր և նախագահ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր և նախագահության անդամ։

Ներկայումս Ս. Համբարձումյանը շարունակում է իր հասարակական գործունեությունը՝ որպես **«ՇԻՐԱԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ Պատվավոր նախագահ։**

Նա արժանացել է Ս. Ի. Վավիլովի անվան, Լենինի, Աշխատանքային Կարմիր Դրոշի, Հոկտեմբերյան Հեղափոխության, Պատվո նշան շքանշանների և բազմաթիվ մեդալների։

Հաշվի առնելով վերոգրյալը, գիտության բնագավառում ունեցած ծառայությունների, համաշխարհային ճանաչում ստացած նոր գիտական ուղղությունների ստեղծման, մեխանիկայի հայկական դպրոցի հիմնադրման, Հայաստանում բարձրագույն դպրոցի և գիտության զարգացման գործում ակնառու ծառայությունների, ինչպես նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքում ունեցած դերի համար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ